«Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

.... 2017 թվականի N .....-Ն

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ ՁԵՎԸ, ԴՐԱ ԼՐԱՑՄԱՆ, ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ու Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված պետական կառավարման մարմինների տնօրինության տակ գտնվող արտաբյուջետային միջոցների հաշվին (այսուհետ՝ նաև պետական բյուջեի միջոցներ) կատարվելիք գնումների պլանի ձևը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) սույն կետի 1-ին ենթակետում չնշված միջոցների հաշվին (այսուհետ՝ այլ միջոցներ) կատարվելիք գնումների պլանի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) գնումների պլանի լրացման, հաստատման և հրապարակման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) գնումների միասնական անվանացանկի (ԳՄԱ) կառուցվածքը՝ համաձայն N 4 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի ....-ից:

Հավելված N 1

ՀՀ կառավարության 2017 թվականի

թիվ -Ն որոշման

Ձ Ե Վ

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ

Պատվիրատուն ----------						
(ըստ բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգման)						
Ծրագիրը						
Անվանումը ----------						
բաժին -- խումբ -- դաս – ծրագիր --						
(ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման)						
Գնման առարկայի		Գնման ձևը	Չափի միավորը	Միավորի գինը	Քանակը	
միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման	անվանումը					
	ապրանքներ					
	--					
	աշխատանքներ					
	--					
	ծառայություններ					
	--					
	ընդամենը					

Հավելված N 2

ՀՀ կառավարության 2017 թվականի

թիվ -Ն որոշման

Ձ Ե Վ

ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ

Պատվիրատուն ----------						
Ծրագիրը						
Անվանումը ----------						
Ֆինանսավորման աղբյուրը						
Գնման առարկայի		Գնման ձևը	Չափի միավորը	Միավորի գինը	Քանակը	
միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման	անվանումը					
	ապրանքներ					
	--					
	աշխատանքներ					
	--					
	ծառայություններ					
	--					
	ընդամենը					

Հավելված N 3

ՀՀ կառավարության 2017 թվականի

թիվ -Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ ԼՐԱՑՄԱՆ, ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են գնումների պլանի լրացման, հաստատման և հրապարակման հետ կապված հարաբերությունները:

II. ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

2. Գնումների պլանի՝

1) 1-ին և 2-րդ սյունակներում լրացվում են գնումների միասնական անվանացանկով սահմանված (այսուհետ՝ անվանացանկ) միջանցիկ ծածկագիրը և անվանումը՝ անվանացանկի 4-րդ մակարդակին համապատասխան.

2) 3-րդ սյունակում լրացվում է գնման ձևը: Ընդ որում, գնման ձևը լրացնելիս հաշվի է առնվում, որ գնման գինն անվանացանկի 2-րդ մակարդակում նշված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների խմբերի հանրագումարն

է.

3) 4-րդ սյունակում լրացվում է՝

ա. «հատ» բառը, եթե գնման առարկան ձեռք է բերվելու ըստ քանակի,

բ. «կգ» բառը, եթե գնման առարկան ձեռք է բերվելու ըստ կշռի,

գ. «լիտր» բառը, եթե գնման առարկան ձեռք է բերվելու ըստ ծավալի,

դ. «մետր» բառը, եթե գնման առարկան ձեռք է բերվելու մետրով,

ե. «տուփ» բառը, եթե գնման առարկան ձեռք է բերվելու տուփով,

զ. «լրակազմ» բառը, եթե գնման առարկան ձեռք է բերվելու լրակազմով,

է. «մ3» բառը, եթե գնման առարկան ձեռք է բերվելու ըստ ծավալի և «լիտր» չափման միավորը կիրառելի չէ,

ը. «զույգ» բառը, եթե գնման առարկան ձեռք է բերվելու զույգով և «հատ» չափման միավորը կիրառելի չէ,

թ. «սրվակ» բառը, եթե գնման առարկան ձեռք է բերվելու սրվակով,

ժ. «դեղահատ» բառը, եթե գնման առարկան ձեռք է բերվելու դեղահատով,

ժա. «մ2» բառը, եթե գնման առարկան ձեռք է բերվելու քառակուսի մետրով,

ժբ. «տոննա» բառը, եթե գնման առարկան ձեռք է բերվելու տոննայով,

ժգ. «գրամ» բառը, եթե գնման առարկան ձեռք է բերվելու գրամով,

ժդ. «դոզա» բառը, եթե գնման առարկան ձեռք է բերվելու դոզայով,

ժե. «կՎտ/ժ» բառը, եթե գնման առարկան ձեռք է բերվելու կիլովատտ/ժամով,

ժզ. «մլ» բառը, եթե գնման առարկան ձեռք է բերվելու միլիլիտրով,

ժէ. «մմ» բառը, եթե գնման առարկան ձեռք է բերվելու միլիմետրով,

ժը. «րոպե» բառը, եթե գնման առարկան ձեռք է բերվելու րոպեով,

ժթ. «գծամետր» բառը, եթե գնման առարկան ձեռք է բերվելու գծամետրով,

ի. «դրամ» բառը, եթե սույն ենթակետի «ա»-«ժթ» ենթակետերում նշված չափման միավորներից որևէ մեկը կիրառելի չէ.

4) 5-րդ սյունակում նշվում է գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների մեկ միավորի գինը.

5) 6-րդ սյունակում նշվում է գնման ենթակա ապրանքի, աշխատանքի կամ ծառայության քանակը: Ընդ որում, եթե տվյալ տողի «Չափման միավորը» սյունակում նշված է «դրամ», ապա այդ տողի «Քանակը» սյունակում նշվում է «1» թիվը.

6) 7-րդ սյունակում նշվում է գնման ենթակա ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ընդհանուր գումարը՝ հազ. դրամով: Ընդ որում, եթե տվյալ տողի «Չափման միավորը» սյունակում նշված է «դրամ», ապա այդ տողի «Միավորի գինը» սյունակում նշված գումարը հավասար է 7-րդ սյունակում նշված գումարը բաժանած հազարի: Հակառակ դեպքում 7-րդ սյունակում նշվում է «Միավորի գինը» և «Քանակը» սյունակների արտադրյալը բաժանած հազարի:

3. Գնումների պլանում փոփոխությունները կատարվում են սույն կարգի 2-րդ կետով սահմանված պայմաններով լրացումներ կատարվելու ձևով:

III. ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

4. Պատվիրատուի ղեկավարի կողմից գնումների պլանը հաստատվում է մինչև տվյալ տարվա փետրվարի 1-ը՝ բացառությամբ սույն կարգի 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված դեպքերի:

5. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվելիք գնումների պլանը հաստատվում է յուրաքանչյուր տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումները հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ առանձին հավելվածով:

6. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ու Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված պետական կառավարման մարմինների արտաբյուջետային միջոցների հաշվին կատարվելիք գնումների պլանները հաստատվում են արտաբյուջետային միջոցների նախահաշիվները հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ առանձին հավելվածով՝ բացառությամբ սույն կարգի 7-րդ կետով նախատեսված դեպքերի:

7. Հայաստանի Հանրապետության օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմինների, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի, Հայաստանի Հանրապետության դատախազության, Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտի արտաբյուջետային միջոցների հաշվին կատարվելիք գնումների պլանը հաստատվում է պատվիրատուի ղեկավարի կողմից՝ պլանով նախատեսվող գնման ձևերը նախապես համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

8. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, ինչպես նաև սույն կարգի 7-րդ կետում նշված միջոցների հաշվին կատարվելիք գնումների պլանում փոփոխություններ և լրացումներ կատարվելու դեպքում պատվիրատուն՝ դրանցում ներառվող գնման ձևերը նախապես համաձայնեցնում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

IV. ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ

9. Գնումների պլանը, ներառյալ դրանում կատարված փոփոխությունները և լրացումները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում, գնումների պլանում կատարված փոփոխությունները և լրացումները տեղեկագրում հրապարակվում են գնումների պլանի ամբողջական տեսքով:

Հավելված N 4

ՀՀ կառավարության 2017 թվականի

թիվ -Ն որոշման

Կ Ա Ռ Ո Ւ Ց Վ Ա Ծ Ք

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԻ

1. Գնումների միասնական անվանացանկը կազմված է ութ նիշ ունեցող թվային ծածկագրից, որը փոխկապակցված է գնման առարկա հանդիսացող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության անվանման հետ: Թվային

ծածկագիրն ունի չորս մակարդակ: Ընդ որում՝

1) առաջին մակարդակը ցույց է տալիս այն բաժինը, որում պետք է ներառվի ապրանքի, աշխատանքի կամ ծառայության անվանախումբը (XX000000).

2) երկրորդ մակարդակը՝ խումբը, ցույց է տալիս բաժնում ապրանքի, աշխատանքի կամ ծառայության անվանախումբը (XXX00000).

3) երրորդ մակարդակը՝ դասը, ցույց է տալիս անվանախմբում ապրանքի, աշխատանքի կամ ծառայության անվանումը (XXXX0000).

4) չորրորդ մակարդակը՝ դասակարգիչը, ցույց է տալիս անվանման մեջ ներառվող՝ վերջնական սպառման ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը (XXXXX000):

2. Առաջին մակարդակը բաղկացած է հետևյալ բաժիններից՝

03000000	Գյուղատնտեսական, ֆերմերային ձկնորսության, անտառային տնտ դրանց հետ կապված արտ
09000000	Նավթամթերք, վառելիք, էլեկտրա էներգիայի այլ աղբյուր
14000000	Հանքարդյունաբերությանը վ արտադրանք, հիմնական մետաղն արտադրանք
15000000	Սննդամթերք, ըմպելիք, ծխախոտ արտադրանք
16000000	Գյուղատնտեսական սարքավ
18000000	Հագուստ, կոշկեղեն, ուղեբեռի հ առարկաներ և պարագ
19000000	Կաշի և կտորներ, պլաստմասսայ առարկաներ
22000000	Տպագիր նյութեր և հարակից ա
24000000	Քիմիական արտադրա
30000000	Գրասենյակային և համակարգչայ սարքավորումներ և նյութեր՝ բա կահույքի և ծրագրային ապ
31000000	Էլեկտրական մեքենաներ, սարք սարքեր և սպառման առար լուսավորություն
32000000	Ռադիո, հեռուստացուցային, հաղ հեռահաղորդակցության և հարա
33000000	Բժշկական սարքեր, դեղեր և ա հիգիենայի պարագան
34000000	Տրանսպորտային սարքեր և տրանսպորտային ապրա
35000000	Անվտանգության, հակահրդ ոստիկանական և պաշտպանա

37000000	Երաժշտական գործիքներ, սա ապրանքներ, խաղեր, խաղալի աշխատանքներ, կերպարվեստ պարագաներ
38000000	Լաբորատորիայի, օպտիկական և ճ (բացառությամբ ապակյա
39000000	Կահույք (ներառյալ գրասենյակայ կահավորանք, կենցաղային ս (բացառությամբ լուսավորության համար նախատեսված արտ
41000000	Հավաքած և զտված ջ
42000000	Արդյունաբերական սարքավ
43000000	Հանքարդյունաբերության արդյունահանման, շինարարակ
44000000	Շինարարական կառույցներ կ շինարարության օժանդակ ար (բացառությամբ էլեկտրական սար
45000000	Շինարարական աշխատա
48000000	Համակարգչային ծրագրային փ տեղեկատվական համակ
50000000	Վերանորոգման և պահպանման ծ
51000000	Տեղադրման ծառայություններ (բ ծրագրային փաթեթներ
55000000	Հյուրանոցային, ռեստորանային կ առևտրի ծառայությունն
60000000	Փոխադրման ծառայություններ (բ թափոնների փոխադրմ
63000000	Փոխադրման օժանդակ ծառայ զբոսաշրջային գործակալութ ծառայություններ
64000000	Փոստային և հեռահաղորդ ծառայություններ
65000000	Կոմունալ ծառայությունն
66000000	Ֆինանսական և ապահովա ծառայություններ
70000000	Անշարժ գույքի հետ կապված ծառ
71000000	Ճարտարապետական, շինար ինժեներական և տեսչական ծառ
72000000	ՏՏ-ի ծառայություններ, խորհրդ ծրագրային փաթեթների մշակում, օժանդակություն
73000000	Գիտական հետազոտությունն փորձարարական մշակման ծառա հարակից խորհրդատվական ծառ
75000000	Վարչական, պաշտպանության և անվտանգության ծառայութ
76000000	Նավթի և գազի արդյունաբերությ ծառայություններ
77000000	Գյուղատնտեսական, անտառային այգեգործական, ջրային կուլտո

	մեղվապահության ծառայու
79000000	Գործարարության հետ կապված ծ իրավաբանություն, շուկայաբ խորհրդատվություն, աշխատողնե տպագրություն և անվտանգ
80000000	Կրթական և վերապատրա ծառայություններ
85000000	Առողջապահության ոլորտում իրա սոցիալական ծառայությո
90000000	Կոյուղու հետ կապված, թափոններ բնապահպանական ծառայու
92000000	Ժամանցի, մշակութային և սպ ծառայություններ
98000000	Այլ համայնքային, սոցիալական և ծառայություններ
99000000	Գնում չհանդիսացող ծա

3. Գնումների միասնական անվանացանկի բացվածքը, ըստ թվային ծածկագրի յուրաքանչյուր բաժնի խմբերի, դասերի և դասակարգիչների, սահմանվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից: